

Վերարտադրողական իրավունքի նման դասակարգումը՝ պոզիտիվ և նեգատիվ, բխում է նաև «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքից և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքից:

Մասնավորապես, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում, որն ընդունվել է 2002 թվականին և ուժի մեջ մտել 2003 թվականին, քննարկվում է **հղիության արհեստական ընդհատման (աբորտի) իրավունքին, կամավոր բժշկական ամլացման իրավունքին, արհեստական սերմնավորման, բեղմնավորման իրավունքին** առնչվող հարցեր: Այսինքն՝ ինչպես տեսանք, սույն օրենքը վերնագրված է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», սակայն անդրադառնում է ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ վերարտադրման հարցերին:

Ավելին՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում (ընդունված և ուժի մեջ մտած 1996 թվականին) կրկին մարդու վերարտադրողական իրավունքը ներկայացվում է **ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ իմաստով:**

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ մարդու վերարտադրողական իրավունքի մեջ մտնող թե՛ պոզիտիվ, թե՛ նեգատիվ իրավունքներից **յուրաքանչյուրն ինքնուրույն իրավունք է:**